Մ. Ս. ՇԱՀԻՆՅԱՆ

Կյանքի 94-րդ տարում վախճանվեց սովետական ականավոր գրող, սոցիալիստական աշխատանքի հերոս, Լենինյան և ՍՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր, ՀՍՍՀ ԳԱ դիմակից անդամ Մարիետա Սերգեյի Շահինյանը։

Մ. Շահինյանը ծնվել է 1888 թ. Մոսկվայում։ Նրա բանաստեղծությունների անդրանիկ՝ Առաջին հանդիպումներ» ժողովածուն (1909) մեր սիմվոլիստական տրամադրություններ, ակայն հանդիպում էին նաև կյանքի ռեալ լատակերները արտացոլող տողեր. երկրորդ՝ եղինակին հաջողություն և անուն բերող գիրը՝ «Օրիենտալիան» (1913), արդեն խոսում ր կյանքին ռեալիստորեն մոտենալու ձգտումների, իրականությունը կոնկրետ պատկերելու չ միայն սոսկ ցանկությունների, այլև շոշանելի հաջողությունների մասին։ «Օրիենտակայում» էին զետեղված նաև «Հայաստանին», Հայ ժողովրդին» բանաստեղծությունները, ոնցում որդիական ցավով ու կսկիծով էր ոսվում «հեռավոր Հայրենիքի», տառապյալ ւ «անտուն» ժողովրդի դաը ճակատագրի ասին։

1916 թ. գրված «Յուր ճակատագիրը» վեպը շմարտացիորեն էր բացահայտում նախահեպոխական ռուսական մտավորականությանը նորոշ ախտերը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը Մ. Շահինանը դիմավորեց Դոնի Ռոստովում։ Նա ակատես եղավ Ռուսաստանի հարավում տեղի ունեցող բուռն իրադարձություններին և իր տեսածն ու ապրածը արտացոլեց քաղաքացիական ոիվներին նվիրված իր լավագույն երկերից մեկում՝ «Փոփոխություն» վեպում (որը ժամանակին արժանացավ Վ. Ի. Լենինի դրվատանքին), «Վերնախավի տիկնոջ արկածները» վիպակում և «Ագիտվագոն» պատմվածքում։

1922 թ. աշնանը Մ. Շահինյանը «Правда» թերթի հանձնարարությամբ երկարատև գործուղման է գալիս Սովետական Հայաստան։ Շուտով կենտրոնական մամուլում հրապարակվում են նրա ակնարկները, իսկ 1923 թ. Մոսկվայում լույս է տեսնում Մ. Շահինյանի «Սովետական Հայաստան» գիրքը, որի վերաբեր-

յալ Ալ. Մյասնիկյանը գրել է հեղինակին. «Ձեր վերջին գրքերը, հատկապես «Սովետական Հայաստանը» մեզ ուրախացնում են»։ Այնուհետև Հայաստանի թեման դարձավ Մ. Շահինյանի հետաքրքրություններից մեկը և հարատևեց մինչև գրողի կյանքի վերջը։ 1951 թ. ՍՍՀՄ պետական մրցանակի արժանացավ հանրածանոթ «Ճանապարհորդություն Սովետական Հայաստանում» գիրքը՝ հեղինակի շուրջ քառասնամյա աշխատանքի հանրագումարը, հայ ժողովրդի անցյալի, ներկայի ու ապագայի մասին հարուստ նյութ ներառած մի հանրագիտարանտարեգրություն, իր տեսակով առաջինը մեր գրականության մեջ։ Իսկ նրա «Հիդրոցենտրալը» վաղուց անցել է սովետական գրականության դասական ստեղծագործությունների շարքը։

Լայն են Մ. Շահինյանի հետաքրքրությունների շրջանակները, դրանք ներառնում են սովետական իրականության բազմաղան ոլորտնե-

ը։ Այնուհանդերձ կա մի թեմա, որը հարատևում է տասնամյակներ, որին հեղինակը նվիրել է ստեղծագործական իր լավագույն պահերը. դա լենինյան թեման է, որի շահինյանական մեկնաբանությունն ամփոփված է լենանյան մրցանակի արժանացած նրա քառապատումում։

Դեռևս 1920-ական թթ. կեսերին Մ. Շահինյանը ստեղծում է Վ. Ի. Լենինի հեղափոխական գործունեության արշալույսին նվիրված սովետական գրականության առաջին ակնարկներից մեկը՝ «Տորնտոն ֆաբրիկան»։ Այն վերարտադրում էր անցյալ դարի 90-ական թթ. երիտասարդ Լենինի ղեկավարությամբ Պետերբուրգում կազմակերպվող ռուսական առաջին բանվորական հեղափոխական խմբակների մթնոլորտը։

1930-ական թթ. կեսերին Մ. Շահինյանը հղանում է Լենինի մասին քառապատումը և արդեն տասնամյակի վերջերին ավարտում «Ուլյանովների ընտանիքը» վեպ-ժամանակագրությունը, որն արժանանում է Ն. Կ. Կրուպսկայայի, Լենինի եղբայր Դ. Ի. Ուլյանովի ջերմ գովասանքին։

1966 թ. լույս տեսավ քառապատումի հաջորդ մասը՝ «Առաջին համառուսականը», որտեղ լենինյան թեման Մ. Շահինյանը բացահայտում է պատմական դարաշրջանի կոնկրետ փաստերի իմաստավորման միջոցով, ձգտում առավելագույն ճշգրտության «...մարդուն դարաշրջանի պատմական իրադրության մեջ» նկարագրելիս։

Քառապատումի մյուս մասը (1960) բացահայտում է տակավին երիտասարդ Լենինի այն միտքն ու համոզմունքը, որ կարելի է վերափոխել ժողովրդի կյանքը «ոչ թե միայնակ, ոչ այնպես, ոչ այն ճանապարհով», ինչպես արվել էր մինչ այդ։

Քառապատումի վերջին մասը կոչվում է «Չորս դաս Լենինից»։ Այստեղ ևս Մ. Շահինյանի խոսքը ծանրակշիռ է, ներգործուն։ Փաստագրական այս ստեղծագործությունը նույնքան և գեղարվեստական է, նրա յուրաքանչյուր տողը՝ մանրամասն ստուգված, զերծ գունազարդումից։ Վլադիմիր Իլյիչը հառնում է գրքի էջերից որպես խորը մտածող, հանճարեղ մարդ, և միաժամանակ խիստ մարդկային։

Իր հարուստ կյանքով ու երջանիկ ճակատագրով հայրենիքի հետ ամուր կապված Մ. Շահինյանը թողեց հարուստ և բարձրարժեք ժառանգություն։

Հ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ.